

ԱՐՏԱՍԱՅՄԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿ

Պ Ա Ն Ա Մ Ա Ց Ի Գ Ո Ր Ը Ը

(Շարունակութիւն)

Պահամագի գործը իւր հետաքրքրութեամբ ետ է մղել բոլոր միւս համաշխարհակին հարցերը ու խնդիրները

Մեր վերջին քրոնիկը վերջացրինք ասելով, որ Ֆլոկէի տեղը, իր նախագահ պատգամատրների ժողովի, բռնեց կազիմիր Պեռիէն և որ Ռիբօ-Լուրէ-Ֆրելսինէի մինհստրութիւնը լօժարակամ փոփոխութեան ենթարկեց, զրկւելով Լուրէից և Ֆրելսինէից, ալդ երկու շատ լարգւած անձնաւորութիւններից, որոնց տեղերը գրաւեցին Դեւել' ը իբր արտաքին գործերի մինհստր, և Լուազիլլոն' ը իբր զինուրական մինհստր, ինչը Ռիբօն ստանձնեց ներքին գործերի մինհստրութիւնը.

Անկարելի է լուռթեան տալ Ֆրելսինէի հրաժարականը և ոչինչ չասել ալդ շատ լարգւած աշխարհական անձի մասին, որը հանգուցեալ Գամբետտավի ընկերակիցն էր 1870 թւականին և գրեթէ անփոփոխ զինտրական մինհստր էր վերջին 5—6 տարիների մինհստրութիւնների մէջ:

Բանը նրանումն է, որ արդէն զեկունմբեր ամսին կարնօն աշխատում էր որ Ֆրելսինէն վերստին լանձն չառնի մինհստրութեան պաշտօն. սական զա անհնարին եղաւ. Բայց վերջերքում, Ֆրէլսինէն ստիպեց հրաժարական տալ Լուրէի հետ. մեղաղրաւղ Շարը Լեսսեպսը լալտարարեց դատաստանական քննիչին, թէ ինչը ոչ թէ չէր կաշառում, ալ ստիպւած էր սակարգութիւններ անել մինհստրների հետ և ալն է ոչ թէ վերջիններիս օգտին, ալ ալդ մինհստրների բարեկամների և նոցա պաշտպան լրագրերի համար և որ Ֆրելսինէն նույնպէս իւր պահանջած անհաւատալի խոշոր գումարը իջեցրեց $1\frac{1}{2}$ միլ. ֆրանկի.

Գալով Լուրէի հրաժարականին, պէտք է ասել, որ սա միան առիթի էր սպասում մինհստրութիւնից հեռանալու, քանի որ ամբողջապէս չէր համաձակնում նոր մինհստրութեան հետ մնղաղրաւղ պատգամաւորներին

դատի կանչելու, որոնց թւում և Ռուսի ին, զէպի որը Լուրէ՛ն առանձին լարգանք է տածում:

Արտպէս թէ այնպէս Ռիբօ՛ի մինխատրութիւնը ինքը վերակազմեց առանց բանը ամբողջ մինխատրութեան հրաժարականի հասցնելու:

Պատգամաւորների ժողովի նոր նախագահը, Կազիմիր Պեռիէ՛ն, պատկանում է Նշանաւոր գերդատատանի Նոր անունը և ազգանունը կրող Կազիմիր Պեռիէ՛ն (1777—1832) մինխար էր 1831 թ. Լուի Ֆիլիպպ թագաւորի օրով և զոհ դնաց իւր եռանդին հասարակական բարիքի համար:

Առաջ ենք բերում ներկայ նախագահի լունար 12 արտաօանած առաջին ճառի նշանաւոր կտորները:

ԱՄԱՆՆԱՎՈՐ անհատների մոլորութիւնները անկարող են խախտել հանրապետութիւնը, Ըստհանուր ձախատաւոթիւնը անքան էլ չէ հրապուրում կրքերով, որքան քաղաքական ազիտատորները: (Ծափահարութիւններ): Նա ընտելացել է ազատութեան իրաւոնքներին և գիտէ որ ուրիշ է ազօխաներում այն սխալները, որ հանրապետութիւնը ցանկանում է հրազարակ հանել և կիմանալ պատժել—ուրիշ ժամանակներում, ալդ սխալները կը մնալին չը մերկացած և անպատիծ թողածու: (Երկար ծափահարութիւններ):

Ալիունեան, առաջարկելով սպասել արդարադատութեան վճռին, Կազիմիր Պեռիէ՛ն հրաւիրեց պալատին զրադւել պետական ելումուտքով և ապա վերջացրեց իւր խօսքերը ալպէս:

Անթէ կարգի պահպաննելը կազմում է կառավարութեան առաջին պարտաւորութիւնը և է հիմնական պալման առաջադիմութեան—տպա ուրեմն ժողովին մնում է վկալել, որ առաջադիմութեան մէջ նա տեսնում է ամենալաւ գրաւականը հասարակական հանգստութեանու: (Երկար ծափահարութիւններ):

Ցունար 10 (Ե. տ.) սկսեց մեղադրեալների հարցաքննութիւնը դատարանի զանլիճում: Կառավարութիւնը զգուշութիւնից դիմուլ էր արտակարդ միջոցների՝ խաղաղութեան և կարգապահութեան համար, սական խոռվարող ցուցեր բնաւ տեղի չանցան:

Ցունար 10 (Ե. տ.), յամը տասներկուսից քուան բոպէ անց բացւեց նիստը նախագահութեամբ Պերիւիէ՛ի: Մեղադրող դատախազն էր Ռաս (Rau), Ներկալ են բոլոր մեղադրուդները բացառութեամբ տկար Ցեղինանդ Լեսսեպսի:

Մեղադրաւածների քամակին տեղեր գրաւեցին դրանց պաշտպանող փաստաբանները: Կաֆելի կողմից—Վալենտիկ Ռուսօ՞ն, Շառլ Լեսսեպսի կողմից՝ Բառքու, Ֆոնտանի կողմից՝ Դիւկ Բիւլի, Անրի Կոտտիւլի կողմից—Մարտինի: Սղագրողները բռնեցին զանլիճի ձախ կողմը, Ներկայ հասա-

րակութեան խոշոր մնծամասնութիւնը կազմում էին փաստաբաններ։ Հրա-
կիրած մնղաղրտղների և վկաների անունները տալուց կետով, նախա-
գահը դիմում է Շառլ Լեսսեպսին։

Վերջինս, անելով Պանամակի ջրանցքի համառօտ տեսութիւնը,
չափանում է որ իւր հօր առաջին անկանողութիւնը իրանց բացատրեցին
նրանով թէ լոկ Ֆերդինանդ Լեսսեպսի անունը բաւական չէ, ալ հար-
կաւոր էր գործին մասնակից անել «Միջազգակին բանկի» կառավարիչ—
Լեւի Կրեմիչին, որին պաշտպանում էին Ժիռառդէն, Ժիրիա, Ճենտի,
Պտի Գուռնալ Թերթը, «Ֆինանսական շարաթաթերթը», հարիւր գաւա-
ռական թերթեր և ալին և որ այս բոլորի ծախքը կանի ոչ աւելի քան
800.000 ֆր., Անուհետեւ Շառլ Լեսսեպսը հաւատացնում է որ Լեւի Կրե-
միչին էր որը մատնացող արաւ կուվրէ և Գերասանի վրա, որոնք իրը
թէ և գնահատեցին ջրանցքի նոսուածքը 512 միլ. ֆրանկ։ Նախագահը
և դատախազը կտրում են սրա խօսքերը ասելով, որ Պանամակի ընկե-
րութեան լրագրերը ալդ հանգամանքը չափարարել էին ալլ ձեռվ, ան է
իր թէ վշեալ կապալառուները 512 միլ. ֆրանկով չանձն էին առել
ամբողջ ջրանցքի փորելը և որ ստորագրութեան վերջանալուց ի-
տու կոնցեսիակի տէրերին, իրը զիջում, լատկացրեց 10 միլ. ֆրանկի ակ-
ցիաներ, որոնք բաժանուած էին 900 փակերի և որ դրանցից 90 հատ
ստացել էր Ֆերդինանդ Լեսսեպսը, իսկ 10 հատ Շառլ Լեսսեպսը, 420՝ ը
ստացել էր Պարիզի առաջին սինդիկատը և 59 անձինք ստացել էին մի
մի փակ¹⁾։

Մենք կանգ կառնենք փոքր ի շատէ նշանաւոր ցուցմունքների վրա։

Շառլ Լեսսեպսը մնղաղրտում է խալքբարագրութեան մէջ և հասարակա-
կան հաւատը ի չար գործ ածած լինելու մէջ, Դատաստանը աչքի առաջ-
ունի միան երկու վերջին օրվիցացիաների շրջանառութիւնները 1888
թւականին։

Կոլումբիակի կառավարութիւնը Պանամակի ջրանցքի փորելու կոն-
ցիանական տեղ էր 1877 թ. մի մասնաւոր ընկերութեան, որի զլուխն էին
Բոնապարտ Վիզ և գեներալ Տիւռ։

Շառլ Լեսսեպս, Աստ պակմանի ջրանցքի փորելը չէր կարելի
լանձնել և ոչ մի կառավարութեան, բաց ալդ իրաւունքի զիջանելը
մասնաւոր անձանց չէր արգելուում։ Զեզ լավտոնի է հօրս ոգեսորուղ և մե-
ծասիրատ բնաւորութիւնը։ նա չափշակաց ջրանցքի ծրագրով և վճռեց

¹⁾ Շառլ Լեսսեպսը, որը սկզբում իրան անտեղնակ լալոնեց ալս հաշիւներին, դատախազի տւած ալս բացատրութիւններից կետով ասաց, որ մնացեալ փակերը բաժանւած են եղել բանկիրներին և մամուլին
ի վարձատրութիւն սրանց մատուցած ծառակութեան։

նրան զլուխ բերել, «Ան զօրավարը, որ տանում է մի լաղթութիւն, առաջ նա ինձ, երբէք չի հրաժարում երկրորդի տանելուց»:

Մենք դնացինք Պանամա, որի նկարագրութիւնը հայրա գրեց «Journal du Canal Interocéanique» թերթում, Անհրաժեշտ դրամագլուխ հաշված էր 400 միլիոն ֆրանկ:

1888 թւականին պարզմատու վիճակախաղ օրվիգացիաների լրջա- հանութիւնը տեղի ունեցաւ մասնակցութեամբ սինդիկատների¹⁾, որոնք պատասխանատու էին լինում միմիան շրջահանութեան ծախքի համար: Սինդիկատի անդամները դրա համեմատ պարտաւորւեցին տալ մեզ ամեն մի օրվիգացիակի համար — 2½, ֆրանկ, մինչդեռ Պանամակի ընկերութիւնը իւր կողմից պարտաւորւեց, որ եթէ լրջահանութիւնը լաջողվի, ինքը կը վճարի, իբր պրեմիա, սինդիկատի անդամներին, ամեն մի օրվիգացիակի համար 5, 10, 15 և մինչև անդամ 20 ֆրանկ: Սինդիկատին մասնակ- ցողները օգուտ ունեցան ալսպիսով մօտ 11 միլիոն ֆրանկ:

Նախագահի առարկութեան թէ էկսպիրաները պնդում են, որ աւելի մեծ գումար է մօխւած՝ Շառլ Լեսսեպսը պատասխանում է, «Մենք ստիպ- ւած էինք ակսամակից աղանովել զանազան ելմոտաղէս Փինանսիստներին լինելիք շահը իրանց աշխատակցութեան և օգնութեանց փոխարէն: 1879 թւականից սկսած մենք սուլորեցինք հաղատակւել շատ բանի պա- հանջմունքներին», (Ազմկալի լուգումն քններ):

— Սակայն շատերը սինդիկատի անդամներից, առարկում է նախա- գահը, չը հատուցին 2½, ֆրանկ ամեն մի օրվիգացիաի համար: Վերջա- պէս, — սինդիկատը, մամուլը, բանկիրների ստացած լանձնավճարը — աւելի քան 40 միլիոն ֆրանկ կորզեցին ընկերութեան դրամարկղից:

— Շարլ Լեսսեպս պարագաները, բիսկի նսթարկվելով, մեզ փող աւին վարկով: Առանց ալդ բանի ընկերութեան գործը պէտք է դա- դարէր 1887 թ., Նրանք մեզ տւել էին աւելի քան 30 միլիոն ֆրանկ և վարձատրութիւն պահանջնեցին լրջահանութեան ժամանակին, Բանկիր հուգո Օբեռնդորֆերը ստացաւ իբր սինդիկատի անդամ 3 միլիոն ֆրանկ և 2 միլիոն ֆրանկ իւր մտքի համար վերաբերմամբ պահուստի դրամարկղի, որը կ'ապահովէր վիճակախաղ փոխառութեան պարտքաշջը: Աւ բացի աղը, նա կարող էր իբրև ազդեցիկ սպեկուլեատոր — վասել Պանամակի թղթերի արժեքները իջեցնելում:

Բառոն Ռախախը ստացաւ 2½ միլիոն իբրև սինդիկատի անդամ և աւելի քան 3½, միլիոն լաղտարարութիւնների համար:

Եթէ փոխառութիւն է անում, հարկաւոր է ոչ միան սինդիկատ

¹⁾ Ընկերութիւններ՝ առաւել կամ սրակառ անդամներից կազմւած, որ և գործ՝ առարտական թէ վարկալն՝ դլուխ բերելու համար:

կազմել և կազմակերպել «լատարարութիւնները», այլ և գործ ունենալ այն ամեն անձերի հետ, որոնք պահանջներ են անում իրանց մատուցած երեսակալական ծառալութիւնների փոխարէն... իսկ աղջակիսինները անհամար են, (աղմուկ և ծիծաղ)։

Այդ տեսակ ձանձրովթներից ազատելու համար մենք լանձնեցինք առաջ Լուի Կրեմիէլին և ապա բառուն Ռախնախին լատուկ գումարներ, որ նոքա կարող էին գործ ածել իրանց հակեցութեան համեմատու դա մի տեսակ կապալ էր։

Եթէ ևս լսէի Ռախնախին, պէտք է մսխէր փոխանակ Յ միլիոնի՝ 12 միլիոն ֆրանկու։

Ավուշնատն Շառլ Լեսսեպսը խօսում է «անանունու ստացականների մասին, որոնց հեղինակը, իւր ասելով, էր Ֆրոնտանը և որ վերջինիս խօսքերի համաձախն՝ վկարելի էր գոհանալ աւելի պակաս գումարներով, միայն թէ ստորագրութիւն չը պահանջէր ստանալու մասինու Դահլիճը պրտկում է ծիծաղից ալ բացատրութեան միջոցին։ Ապա Շառլ Լեսսեպսը անցնում է գաղտնի գումարն երին։

«Crédit Foncier» (Աալէւածական բանկ) մի պետական հաստատութիւն է և իր գաղտնի գումար մսին է 12 տարում 116 միլիոն ֆրանկ։ Նոք կառավարութիւնը ունի նմանապէս իւր կարգադրութեան ներքու գաղտնի փոնդ, Մենք ևս ունէինք արդյունին, Այդ գումարներից մենք վճարել ենք կոռնելիուս Հերցին 600,000 ֆրանկ։ Երբ առաջին անդամ մենք մտածեցինք վիճակախաղ շրջահանութեան մասին—մեզ զդուշացրին որ Կ. Հերցը ազդեցի կապեր ունի կառավարութեան հետ և որ անհրաժեշտ է նրան մեր կողմը գրաւել։ Սա հազիւ հազ կարողացաք նրան կոտրել 600,000 վրա։

«1886 թւականին, երբ որ ևս խնդիրք ներկալացրի վիճակախաղ շրջահանութեան մասին—պ. Բալօն, այն ժամանակաւ մինխատը հասարակական շինութիւնների, պահանջեց որ ես իւր կարգադրութեան տակ դիւն էի մի միլիոն ֆրանկ, վճարելի երեք ժամանակամիջոցում՝ խնդիրքիս ներկալացման օրից մինչև պարլամենտարին ներկապացմի օրը» (Փոթորկալի լուղունքներ գանվճռում, Նախագահ Պերիկէն սպառնում է դատարկել տալ դահլիճը), ևս վճարեցի միմիակն առաջին վճարելիք մասը՝ 375,000, որովհետև խնդիրքս մերժեցու։

Մերժելով բացատրութիւններ տալ 600,000 ֆրանկի մասին, որոնք բաժանած էին մաս մաս և այն հանգամանքի մասին, որով մի քանի անձերին վաճառւած էին օրլիգացիաներ բորավին գնից պակաս—Շառլ Լեսսեպսը ասաց մի քիչ լուղուելով. Անգո ամենը պահանջւեց մեղանից դանակիները ձեռքերին, և մենք տվնեք փողը, ինչպէս որ մարդս տալիս է իւր ժամացուցը երբ աչդ պահանջում են մութ անտառում։

—Երբ մէկը ժամացուց է խուռամ մութ անտառում, առարկեց նախագահը, զրա մասին լավանում են ոստիկանութեան:

Դատարանի առաջին նիստը վերջացաւ Շառլ Լեսանքսի լավանութեամբ, թէ կոստիկ և Յոնտանը շիտակ մարդիկ են և որ նրանք դործում էին իւր կարգադրութեան համաձան:

Հետեւ ալ օրւակ երկրորդ նիստը նւիրւած էր կոստիկի, Ֆոնտանի և Էլֆելի հարցաքննութեան, Երկու առաջին մեղադրւածների ասածները մեծ բան չեն ներկայացնում, ուստի անցնենք երրորդին:

Պահամալի ընկերութեան և Էլֆելի իրար հետ կապած պարմանը կարդալուց իստու, նախագահը դիմում է Էլֆելին:

«Դուք կապւել էք ընկերութեան հստ ջրանցքը ամրողապէս զլուս բերելու և ստացել էք հետեւալ գումարները.

1.200.000 ֆրանկ գետի տեղը փոխելու,

3.000.000 ու ճանապարհ պատրաստելու փորած հողը դուրս տանելու համար:

6.000.000 ֆրանկ իր կանխալիմար նախագատրաստական գործերի համար:

12.000.000 ու առաջին չորս շվիզների համար, ամեն մէկը երեք-երեք միլիոն հաշելով:

Ի՞նչ գործադրութիւն էք տեւել այս գումարներին:

Էլֆելը աւլիս է խառնաշխոթ պատասխաններու նախագահը վշեց-նում է, որ մեղադրւածի մատեաններից երեսում է, որ նա նիւթեր է հասց-րել Պահամալի նեղուցը միմիան 1.223.000 ֆրանկի:

Էլֆելը զլսաւորապէս փորձում է արդարանալ նրանով, որ համաձանութիւն է կալացրել Բրիւկնէի հետ, որը նշանակած էր Պահամալի գործերին վերջ տալու և որ այդ համաձանութիւնը հաստատած է դատարանով նախագահը առարկում է թէ հարց է արդեօք չը պիտք է այդ համաձանութիւնը անվաեր համարել քանի որ Բրիւկնէն կարող էր մոլորած լինել Ալպա, շարունակելով մէջ է բերում մի ուրիշ օրինակ, երբ Էլֆելը պատվիրած մինելով միշնկերութեան 2.880.000 ֆրանկի մեքենաներ—իւր գրանում պահելով Պահամալի ընկերութիւնից ալի մեքենաների հաշիւն ստացած մօտ երեք միլիոն ֆրանկ գումարը—վճարում է վիշեալ ընկերութեան միմիան մեքենաների նկարների և գծագրելու ծախքերի արժեքը՝ 7.047 ֆրանկ:

Նըրորդ օրւակ հարցաքննութիւնը նւիրւած էր վկաներին և էկսպերտներին: Մենք ուշադրութիւն կը տամնք աւելի նշանաւորներին:

Բրիւկնէի փոխանորդ Մոշիկուռը իւր երկար ցուցմունքներով հաստատեց ան, ինչ որ ընդհանրապէս լավանի է, ամելացնելով որ ընկերութիւնը կապալառուներին չափից դուրս թանդ էր վճարում, որ Պահամա-

լում ծառալողների կազմակերպութիւնը աչք էր զարնում իւր արտակարգ փառաւորութեամբ, Վկավի կարծիքով մամուլին անքան էլ շատ չէ վճարած լաւտարարութիւնների համար, ալ ևթէ կարելի է ախտէս ասել, ընկերութեան հոգին հանողը եղել են սինդիկատները և բանկիրները (որոնք ընկերութեանը նստել են առնւազն 106 միլիոն ֆրանկ) և որ առաջինը դոցա մէջ էր Ռախնախը, Ալս վերջինիս և Լեվ Կրեմես'ին Մոշկուռ անւանում է «Պանամալի ձեռնարկութեան խոցերու»:

«Յակտարարութեան և սինդիկատի ծախքերի հաշվի գումարների մի մասը կազմում են անշուշտ ան փողերը, որ Ռախնախը դրել է իւր գրապանը. (աղմկալի լուզմոնքներ) նա մի շատ ճարպիկ աֆերիստ էր, որը գիտէր օգուտ քաղել ամեն մի ազդեցութիւնից»:

Բառոն Ռախնախի մասն էին կազմում «ազդեցիկ անձնաւորութիւնները», 1888 թ. ոչ ավ ոք քան Ռախնախը՝ անձնաւորութեան առաւ պարլամենտում ձախներ ժողովել քէարկել տալու համար վիճակախաղ շրջահանութեան օրինագիծը (Յուզում):

Ես երբէք չը կարողացակ նրանից հաշիւ ստանալ մսխւած գումարների մասին, Եւ երբ ես նրան հարցրի, արդեօք նա բաժանեց Պանամալի փողերը, — նա ինձ պատուսխանեց՝

«Դուք շատ միամիտ էք, եթէ երեակարում էք, թէ ես ձեզ կը պատախանեմ».

Անհարին էր հաշատ ընծալել նրա շխտակութեան. ամենքը գիտէին, որ նա սեփականացնում է առիւթի մասը ան փողերի, որ ստանում էր ընկերութիւնից ուրիշներին բաժանելու համար»:

Շառ կ ես ս ե պ ս. — Ես հաշատ չէի տածում դէպի Ռախնախը, Բայց թէ մոզ շատ մարդիկ էին փող ուղելով նեղացնում, Ես չէի ճանաչում ազդ բոլոր անձներին, Դրանց ձեռքից ազատուելու համար ևս ուղարկում էի ալգալիսիններին առաջ Լեվ Կրեմես'ի մօտ, իսկ լետու Ռախնախի, Եւ խընդիրը սենատորների և պատգամաւորների մասին չէր, ալ ընդհանուր օգնութեան, Ում էր բաժանում Ռախնախը — ալդ ինձ անլատ է, Ես երբէք չեմ ցանկացել հետաքրքրել ազդ մանրամասնութիւններով».

Հաղորդակցութեան ճանապարհների գլխաւոր վերացու կացու Ռուսսոն լաբանում է որ ինքը կառավարութեան առաջակութեամբ 1886 թ. քննել է Պանամալի ձեռնարկութիւնը և նոն թւականին արել է իւր զեկուցուամը, Զրանցքի զլուխ բներելը, որը թերեւ դրեթէ անհարին է, անուամենանիւ կարելի էր գլուխ բներել, եթէ մինչև 1888 թ. փոխէր ծրագրւած եղանակը, և որ ալդ վերջին ձեր ջրանցքը հարաւորութիւն կտար արքէնը առառաւելն 20 միլիոն տոն փոխադրելը».

(Զրանցքի տեղափոխելու կարողութիւնը սկզբում, Բոնապարտ Ալզի

օրով, հաշված էր 4½, միլ. տոննա, իսկ քիչ ժամանակից չետու 7 միլ. տոննա, Երբ չը լաջողեց 400 միլիոնանոց ընկերութեան կազմելը — ձեռնարկեցին 300 միլիոնանոցի կազմելուն)։

Ինժինէր Դինգլէրը, որը հսկում էր ջրանցքի փորելուն 1883-ին 1885 թ., վկայեց որ ջրանցքի սկզբնական ծրագիրը իրագործած էր, բաց դլուխ բերելու համար հարկաւոր էր 15—20 տարի և մի միլիարդ ֆրանկ գրամ. Գալով էլֆէլին՝ վկան ասաց, որ նրան ներկաւացրած է եղել կապալը ամբողջութեամբ, սակաւն էլֆէլը բաւականացաւ. վողերը ստանալու, առանց նիւթերը տեղ հասցնելու 6 միլիոն ֆրանկի գումարնմանապէս անօրէն կերպով է իւրացրել էլֆէլը՝ տեղ հասցնելու, բարձելու և ափը հանելու ծախքերի հաշվի։

Չորրորդ նստի սկզբում տեղի ունեցաւ բանկիր Հուգո Օբերնդեօր. Փէր'ի ցուցմոնքը, որը ոչ մի նորութիւն չի պարունակում։

Ապա նախագահող Պերիէն խօսքը տալիս է դատախազ Ռո'ին։

Վերջինս մեղաստոր ճանաչեց նաև և դլխաւորապէս Ֆերդինանդ Լեսսպո'ին, որը սփոսանակ իւր սխալը խոստովանելու, նախադասեց ստորանալ մինչեւ իսկ քրէական միջոցների, աշխատելով իւր հանից քարշել և հասարակական կարծիքը և ժողովրդական խնալողութիւնները։

Այսուհետեւ պ. դատախազը արաւ. Պանամալի հեռնարկութեան պատմութիւնը ստորագծելով Ֆերդինանդ Լեսսպոսի վարմունքները։

Առաջին խարերազական քավը կաւանում է նրանում, որ ընկերութեան Բիւլլետեն օրգանը լատարարեց, թէ ամբողջ ջրանցքի փորելը կապալով է տրամադ կոււրէին և Գերսան'ին¹⁾ 512 միլիոն ֆրանկով։

Ապա վշշեալ կապալառուների պակմանը խախտում են և վճարում մեծ տուգանք ոչ մի դժգոհութեան տեղիք ըստ տալու համար. Մինչդեռ աչդ խախտումը ապացուց էր գժարարութիւնների — ընկերութեան Բիւլլետէն՝ շարունակում էր հաւատացնել, թէ ջրանցքը պատրաստ կը լինի 1889 թւականին։

1885 թւականի շրջանանւած օրվիգացիաների մի մասը մնացել էր անվաճառ. Թղթերի գների անկումից վախեցած — ընկերութիւնը ֆոնտանի միջոցով պաշտպանում է գները արհեստական առք ու ծախքով։

Պանամալից վհատնցուցիչ լուրեր են գալիս մշակների սարսափելի մահացութեան մասին, բայց «Բիւլլետէն»-ը հաւատացնում է թէ Պանամալի նեղուցում մարդիկ աւելի պակաս են մեռնում քան Եւրոպալի շատ գործարաններում։

Իսկ 1888 թւականին «Բիւլլետէն»-ը զետեղում է նաև հետեւալ նկատողութիւնը։

¹⁾ Արանց մատնացուց անողը, Շառլ Լեսսպոսի ասելով, եղել էր Լեւի կրթմիէն։

«Դինզգէրը Պարիզ հասաւ Ընկերութեան ղեկավարողների հետ խորհրդակցելու համար ձեռնարկելի միջոցների մասին, որպէս զի ջրանցքը բացվէ 1888թ.»

Ապա հանդէս է գալիս վլճակախաղի միտքը Ընկերութեան կողմից մատուցած խնդիրքում կատարւած գործի արժէքը դնահատում է 471 միլիոն, մինչդեռ խսկականը էր 171 միլ. ֆրանկ, և այդ գումարի մէջ նաև շնորհիմների արժէքը

Ուստաso'ն ուղարկում է քննելու գործի դրութիւնը, իսկ «Բիւլետէնու» լատարարում է թէ «Ուստաso'ն գնաց Պանամա ջրանցքի բացումի վերջնական գործողութիւններին ձեռնարկելու համար».

Ուստաso'ն, որպէս նաև Ընկերութեանը ծառալող թօֆ և Ժակէ ին-ժենէրները, պնդում են թէ ջրանցքի ծրագիրը պէտք է փոխել և դարձ. նել վլւզաւոր, իսկ Լեսսեպս-հակը պնդում է թէ վլւզները բանի պէտք չեն ծովագնացալին ջրանցքի համար. իսկ Լեսսեպս—որդին լատարարում է որ, գործը լաւ քննելուց իտու, նա եկաւ այն եղբակացութեան, թէ ջրանցքի բացումը կարող է տեղի ունենալ 1889թ.»

Ընկերութիւնը ստորագրութիւններ է ժողովում—պարլամենտի վրա ներգործելու մտքով; Պարլամենտական լանձնաժողովը պահանջում է Ընկերութեան մատեանները, Նեղացած Լեսսեպսը ետ է վերցնում իւր խնդիրքը, Ընկերութիւնը նորից կանգ է առնում ակցիաների սովորական շրջանա-նութեան վրա; Պանամալից հասնում են վհատեցուցիչ լուրեր, Ընկերութիւնը զիջումներ է անում սահանքաւոր¹⁾ ջրանցքի ծրագրի օգտին, Ակնուա-մենաշիւ 500.000 նոր ակցիաներից հասարակութիւնը գրւում է 280.000 հատի, Ընկերութիւնը էլի վերագանում է վլճակախաղ շրջանանութեան, Նոյն օրը երբ ըներութիւնը այդ խմաստի խնդիրքով դիմեց կառավա-րութեան—նոյն այդ օրը Ընկերութեան իւրվետէնը տպագրեց թէ իրը կապալի պալմանը ստորագրաւած է ինժենէր էլեկտրի հետ.

Ակդրենական շրջանանութեան արդիւնքը հազիւ բաւականութիւն տաց երեք ամսաւալ աշխատանքներին Պանամալի նեղուցում, Վերջապէս օրինագիծը ընդունւում է պալատի կողմից, Ընկերութիւնը շտապում է լախարարել, որ նոր ծրագրերի համամատ աւելորդ է փորմէլ 449.000 խորանարդ մէտր, Ընկերութիւնը ոչինչ չի խնալում տաքացնելու համար ստորագրողների եռանդը, Սակալն նոր պարագաների շահագում է 2.000.000 օրիգա-ցիաներից գնում են միմիալն 840.000, Անում է վերջին փորձը. Ֆերդինանդ Լեսսեպսը անձամբ պտտում է ամբողջ Ֆրանսիան և ամեն տեղ

¹⁾ Սահանք=պայօթ=ըլուսե=շիւզ Սահանք կամ շիւզ կոչում է այն նշանը, շարժուն դռնով, որ շինուած է գետի կամ ջրանցքի վերականութեաներից գնում են միմիալն 840.000, Անում է վերջին փորձը. Ֆերդինանդ Լեսսեպսը անձամբ պտտում է ամբողջ Ֆրանսիան և ամեն տեղ

ճառեր արտասահմում համոզելու համար թէ ջրանցքը պատրաստ կը լինի ամենաուշը 1890 թ., եթէ որ 200.000 ստորագրուող ևս լինին. Նրա ձախը մնաց «Ճաշն բառքառող լանապատի», և տեղի ունեցաւ դատաստանական հաշտարժութիւնը¹⁾.

300 միլիոն ֆրանկից տակին մնաց 698 միլ. ֆրանկի կատարած գործ, որից 255 միլ. ֆրանկը ներկալացնում է եղած չէնքերի արժէքը. Ինքը Ֆերդինանդ Լեսենպուր, դատախազի վկարութեամբ, ունէր 90 փաէ և եթէ դրանք ծախւած լինէին իւր ժամանակին—երբ դոքա բորսակում շատ թանգ էին գնահատւում—Պանամակի ջրանցքի հեղինակը տացած կը լինէր 6.550.000 ֆրանկ—որը թերեւս շատ մեծ գումար է ոլուսաւորող մի գաղափարին համար.

Իւր ճառի երկրորդ մասը դատախազը նուիրեց բացատրելու համար թէ ուր մնացին 600 միլ. ֆրանկը. Այս գումարից, լաւանի է միան, որ 350 միլիոն ֆրանկ վճարել է տոկոսների համար. բայց ուր են մնացեալ 250 միլիոնները. Անա ինդիր.

Իւր ճառի երկրորդ մասում դատախազը օրինական հիմունքների մանրամասնութիւնների մէջ մտաւ և ասդա անցաւ կրկնակի մեղադրանքին ուղղած դէպի մեղադրաւածները. Այդ կրկնակի մեղադրանքն է հետևեալը՝ մեղադրում են Ֆերդինանդ Լեսենպուր, Շառլ Լեսենպուր, Կոստիւկն և Ֆոնտանը խարերարութեան մէջ, քանի որ սուստ գործողութիւններով և հաւաստիութիւններով աշխատում էին հաւատացնել հասարակութեանը մի երազական ձեռնարկութեան իրականացման մասին և, բացի ալդ՝ լայտարարելով Պանամակի ջրանցքի մօտալուստ բացումը—դոքա ջանում էին իրանց ձեռքը գցել մեծ գումարներ, չնորհիւ շրջահանւած վիճակախաղ օրվիգացիաներին.

Մենք բաց ենք թողնում դատախազի առաջ բերած ապացուցները, քանի որ դոքա արդէն լաւանի են վկաների ցուցմունքներից:

«Ոչ ոք, շարունակեց դատախազը, իրաւունք չունի առաստութեան ապացուցներ տալ ուրիշի հաշւի, Բաժանելով 5 միլիոն բառոն Ռախալախին, և միլիոն Օրենքներքի ին և թաղցնելով ազդ խոշոր գումարների ինչ նպատակների նշանակւած լինելը, անկասկած է որ ընկերութեան դեկավարուները մեղատոր են հաւատարմութիւնը ի չար գործադրելուսն նրանք զիտէին որ Պանամակի նեղուցում նրանց սպասում են աւելի սարսափելի արգելքներ և զժաւրութիւններ, Նրանք գիտէին որ աղտոնդ նրանց դէմի էին և բնութեան կլիման, հողի կազմածքը և որ իրապէս անհնարին է զլուխ բերել ջրանցքը խոստացած գումարով և խոստացած ժամանակամիջոցում. Հակառակ ամեն բանի, բոլորովին հոգս չը քա-

¹⁾ =Լիկվիդացի, մի գործի վերջ տալը

շելով ձեռնարկութեան բաժնետէրերի փողերի մասին, ընկերութեան զեկալվարները զօրով առաջ էին գնում, աչքի առաջ ունենալով սոսկ և հսկապսի անւան փառքը և վախ կրելով սոսկ հայիւ տալու օրից, (Դառնալով մեղադրածներին). Բայց ինքններդ՝ անձամբ բնչ զո՞ն բերիք ձեռնարկութեանը Զեր մէջ ես տեսնում եմ միլիոնատէրեր։ Դուք ամենքդ պատկանում էք հարուստ ընտանիքների, Պործի մէջ մացրիք դուք արդեօք որ և է գումարներ։ Դուք ոչինչ չէք մսխել և ոչ մի սանտիմ անգամ! Անշուշտ, դուք հաւատում էիք ուրիշների փողով, (Արկարծափառութիւններ դաշլիճի խորքում):

Օրէնքը հաւասար կերպով է վերաբերում դէպի ամենքը։

Դատաստանը խարերաւ է անւանում այն աղքատ մէկին, որը հինգ կամ տասը սանտիմով լրացիր ծախելիս գալթակղեցնում է հասարակութիւնը մի չեղած դէպօվ արդարանալ փորձելով իրը թէ լրագրում եղած լոդւածի վերնագրով։

Ընդունակ. էք դուք արդեօք ներողամիտ վերաբերեմ դէպի անպիսիններ, որոնք աշխատելով տիրանալ միլիոնների—դիմում են ամեն տեսակ նրբութիւնների, ամեն տեսակ կեղծումների և խարեբաղութիւնների—արդիւնք զանազան ազան և խարդախ աֆերիսնների։

Դատախաղը վերջացրեց դիմնելով դատաւորներին՝ «գործադրել օրէնքը մեղաւորների վերաբերմամբ իւր կատարեալ խառութեամբ»։

Տեղի սղութիւնը մեզ չի ներում մի առ մի թւել բոլոր նառախօս փաստաբանների ասածը ի պաշտպանութիւն իրանց կլիենտների, Մենք մէջ կը բերենք միմիան դատարանի վճիռը։

1) Ֆերդինանդ և Շառլ Լեսանպանները դատապարտում են ամեն մէկը հինգ տարւակ բանտարկութեան և 3000 ֆրանկ տուգանքի։

2) Ֆոնտանը և Կոստիկին ամեն մէկը երկու տարւակ բանտարկութեան և 3000 ֆ. տուգանքի—խարեբաղութեան և հաւատը ի չար գործ դնելու պատճառով։

3) Էլֆելը—երկու տարւակ բանտարկութեան և 20.000 ֆր. տուգանքի, Ալա վճուի արձագանքը հասաւ պատգամաւորների ժողովը, ուր տեղի ունեցան տաք վիճաբանութիւններ, իսկ մի քանի պատղամաւորներ այն միտքը լաւտնեցին որ վճիռը շատ անգոհացուցիչ է և որ կառավարութիւնը կարիք չունի Փինանսիստներից ստանալու իրը ողորմութիւն չնին լումաններ, Ալպա պալատը նաև Ռիթօ'ն ընդունեցին պատգամաւոր կաւենեակի հետեւալ նշան աւոր օրակարդ բանաձնը, սժողովը՝ կամենալով աջակցել կառավարութեանը սրա գործին—վաճառւելու ամեն մի արտակարութեան հալածելուն և վճուելով ալ ևս չը թով տալ կրկնւելուն կառավարութեան այն գործադրած միջոցների, որոնց պալատը գատապարտում է, — անցնում է հերթական գործներին։

Մեր անցեալ քրոնիկի վերջում մենք ան միտքն էինք լաւանել, որ Պանամալի դործի դատաստանական քննութեան առիթով հրապարակ հաճած խալտառակ սկանդալը ունի քաղաքական և ինտրիգալին աստառ Յաջորդած դէպքերը եկան աւելի և զօրեղ ապացույներ տալու աղդ են. թաղրութեան:

Այդ սկանդալի օրով—ֆրանսիական թողոր հին ու նոր կուսակցութիւններին տիրեց մի տենդալին եռանդ:

Ռօնեալսաները (արքայականներ) գուստմ են իրանց սկզբունքների մասին. Պարիզի երիտասարդութիւնը նոյն խակ ուղերձ ուղարկեց Պարիզի կոմմին:

Բոնապարտիատները ժողովներ են կալացնում և ժողովրդի միակ ազատարար—հռչակում են պրինց Վիկտոր Նապոլէոնին, որը ներկայումն է ոոչ թէ իմպերիալիստ, առ լոկ բոնապարտիստ և որ նա գենում է պլեբացիստի, ժողովրդական ձախուութեան սկզբունքի վրա հանրա ապետութեան նախագահ ընտրելու համար. Այս խակ մտքով լալտարարւեց աջակողմեանների պարագլուխ բարոն Լեգու:

Եւ այս բոլորը օրը ցերեկով կատարւում էր մի երկու երեք շաբաթ որանից առաջ, երբ զանազան կողմերից ջանում էին կատածանքի սուսեր դցել նաև հանրապետութեան ներկալ նախագահ Կառնո'ի վրա. Ել ինչու զարմանալ այն հոռետեսների վրա, որոնք գուշակութիւններ են անում թէ զործերի ներկալ խառն դրութիւնը կարող է հասցնել թէկուզ Վիկտոր Նապոլէոնի նախագահութեան, ասդա դիկտատորութեան և ապա միասնամութեան:

Այս ծանր օրերում շատ շատերին զարմանք պատճառեց Հռոմի պատի քալլը. Հակառակ Վիկտոր Նապոլէոնի արած դիմումներին իւր իրաւունքները Ֆրանսիալի զահին ճանաչելու՝ Լեոն ՀՊ պապը հասուատ մնաց մի քանի շաբաթ առաջ իւր մի համակում լաւտնած մտքերին. Եւ երբ կոմա զը Մենը (Ֆրանսիակի կաթոլիկ կուսակցութեան պարագլուխը և ամենամօտ բարեկամը Յիսուսեան զօրեղ կարգի) անցեալ ղեկանեմբերին արտակալուց չօգուտ հանրապետութեան—Լեոն ՀՊ պապը սուն լուսարի մէկին նրան մի նամակ ուղղեց¹⁾, որի մէջ, զիմելով ամբողջ ֆրանսիական ազգին, նա լորդորում է զէն գցել բոլոր կուսակցական երկպառակութիւնները և ներշնչել միութեան և ազգասիրութեան զգացումների հոգով, աչքի առաջ ունենալիք հալրենիքին սպասող վասնող դէմ. Նոյն ադդ նամակում պասկը իրան կողմնակից է լալտարարում հանրապետութեան պահպանման Ֆրանսիակում:

Բայց չը պէտք է կարծել թէ քաղաքական ինտրիգաները դալիս են

¹⁾ Որը և տպագրւեց ֆրանսիական բոլոր թերթերում.

միմիան հանրապետութեան հակառակորդներից, Ընդհանուրի գրեթէ համոզմունքն է որ ալդ սկանդալներին մեծապէս նպաստել են հէնց իրանք հանրապետականները, ինտրիգաներ իրար դէմ, ինտրիգաներ նախագահական ընտրութիւնների համար, արմատականների ինտրիգաներ օպպորտիւնիստների դէմ, ինտրիգաներ մերժաւած կամ ասպարէզից հեռացաւած հանրապետականների կողմից, Ստարաձգութիւններ էին անուամ և անտում են օտար պետութիւնների ներկայացուցիչների վրա, օտար մամուլի, ի թիւա սրոնց և երկու ոռու լրագրերի վրա, ստերաձգութիւնները շարունակում են և հիմա զանազան պատգամաւորների վրա, զանազան զւարճալի և խորհրդաւոր պատմւածքներով.

Պարլամենտական քննիչ լանձնաժողովն էլ իւր կողմից հէնց աղդպիսի մերկացումների է սպասում որ իսկովն և եթէ իւր մօտ հրաւիրի մերկացումներ անողներին հարց ու փորձի համար.

Նատանանք ասելով որ մերկացումներ անողների պարագլուխն է Անդրիե՞ն (Նախկին պրեֆեկտը ոստիկանութեան և նախկին դեսպան), որին իբր թէ լաւանի է մի ցուցակ կաշառակեր 104 պատգամաւորների անուններով և որի ասելով միմիան երկու անձինք՝ Առոտօնը և Հերցը կարող են մի առ մի թւել այդ 104 անունները.

Ի դէպ ուղղենք մեր անցեալ ամիս հաղորդած սխալ լուրը. Առոտօնը դեռ չի ձերբակալւած և իբրև թէ լաւանի չէ նույն իսկ նրա ուր վիճելը. Հերցը, որի բնակատեղին գտնւեց Անդիիալում—թողած է իբր հիւանդ հակողութեան տակի.

Կասկածանքից արգարացել են 3 հոգի՝ նախկին մինիստր Ժիվ Ռոշ, պատգամաւոր Արեն և սենատոր Տեւընէ. Ձեռքակալմէլ է հասարակական շինութիւնների նախկին մինիստր Բալո՞ն, որը և խոստովանել է իւր լանցանքը. Մեղադրող պալատը իւր կողմից անմեղ հրատարակեց նախկին մինիստր Ռուելի՞ն, Դեւեսին, սենատորների՝ Գրեվի՞ն, Ռենօ'ին, իսկ մեղադր հետեւալներին. Բայօ, Պրուսա, Բերալ, Դիկդէ-դը-լա—Ֆոկոնների, Սանլերուա, Գորդոն, Բլոնդեն և Օստոն, չը հաշելով Առոտօնը և Հերցը.

Ակապէս թէ անպէս պարզւած կարելի է համարել Պանամափ ընկերութեան զեկալարողների զատը որոնք ի դէպ ասած արդէն բողոքել են վճռի դէմ, բայց պատգամաւորների կաշառակերութեան գործը՝ ոչ.

Իբրև դրամական լուսաբանութիւն Պանամալի սկանդալի հետեւանքներին առաջ բերենք մի տնտեսական թերթի արած մի հաշիվ՝

Economiste Européen'ը հաշել է որ վեց շաբաթւակ ընթացքում նույնմբեր 19-ից սկսած, ամինքն ան օրից երբ վճիռ կալացաւ զատաստանի ենթարկել Պանամալի գործիչներին—54.067 միլիոն ֆրանկ արժողութեան թղթերը—ընկած գների պատճառով գնահատում էին միմիան 52.651 միլիոն ֆրանկ, ասել է մի վեաս մօտ 1.400 միլիոն ֆր. Պարիզի բորսալի վրա շրջանառութեան մէջ գտնւող բոլոր արժէթղթերը պակասել էին գներում, չորհիւ Պանամալի ընկերութեան գործերի տապալման.

Ակտ առղերը գրւած էին երբ հասան հեռագրական նոր կարևոր տեղեկութիւններ որոնց վիշտակելը միանգամակն տեղին է, քանի որ դոքա կապ ունեն Պանամավի գործի հետ առնասարակ, Ռիօ'ր մինիսարութիւնը առաջարկեց և կարճ վիճաբանութիւններից լետով ընդունել աւեց պալատին երկու նոր օրէնքներ. առաջինի համաձայն նոքա՝ որոնք կը է արձակւեն խնալողական գանձարանների վրա—պատժի կենթարկեն բացի դրամական տուգանքից նաև բանտարկութեան 2 ամսից մինչև 2 տարի. Միւս օրէնքը վերաբերում է առհասարակ անհիմն ստերածգութիւնների առաջն առնելու համար:

Ֆ.